

ԲԱՃՆԵԳԻՆ
Ի Պուրկարիա
Տարեկ. 10 ֆր
վեցամս. 5 "
—
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "
—
Վահրիկա
2 Տոլ. 30 սէնդ
—
ԿԱՆԽԻԿ



ՊԵՏԱՆԿ
Գրութիւնքեւ
չեն տրուիր
—
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE
—

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ · ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏՍԿԱՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Ե ՏԱՐԻ

— ԵԵՊՏ. 29 ՇԱՐԱԹ 1901 —

ԹԻԻ 225

ԱՆԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԲՆԱՋԻՆՁ ԵՂԱԾ

Էրնէսթ Հէկէլի մահուանէն վերջը՝ կրնանք
ըսել թէ անաստուածութիւնը իբր փրկիստփայլու-
թիւն բնաջինջ եղած է գիտական աշխարհէն.
Քանզի անկարծի է գտնել որ և է նշանաւոր մարդ
մը, գիտութեան կամ փրկիստփայլութեան մէջ,
թէ Եւրոպիոյ և թէ Ամերիկայի մէջ որ ինքզին-
քը հռչակած ըլլայ իբր անաստուած: Գիտական
մտածումը այս նկատմամբ հասած է այն եզ-
րակացութեան զոր Հէրպերթ Սթենսըր ամփո-
փած է սա բանաձեւով. «Այն ամեն գաղտնիք-
ներու մէջ, որոնցմով շրջապատեալ ենք, չկայ
ասկէ աւելի ոտոյգ բան մը թէ մենք միշտ կը
գտնուինք Անհուն ու Յաւիտենական զօրութեան
մը առջև՝ ուրիշ կը բլիսի ամէն բան»։ Ստոյգ է
թէ այս զօրութիւնը մէկ հատ մըն է և ոչ թէ
չատ մը. միևնոյն զօրութիւնն է ամենէն հեռա-
կայ աստղին մէջ ու նաև այս երկրագնտիս վրայ
ուր կը բնակինք: Հաւասարապէս ստոյգ է նաև
թէ այս Զօրութիւնն իմացական Զօրութիւն մ'է,
թէ Տիեզերքին մէջ խորհուրդ կայ. թէ մարդս
այս խորհուրդները չտեսնենք, ալ կը գտնէ զա-
նոնք: Երբ խօսքով, Տիեզերքը մտածուած բան
մ'է, և Գիտութիւնը գիտն է անոր մէջ գտնուած
այն նախնական խորհուրդին, որով է որ Տիեզերք
եղած է ան: Ասկէ նուազ ստոյգ չէ նաև որ այս
Անհուն ու Յաւիտենական Զօրութիւնն ուրիշ կը
բլիսի ամէն բան ինչպէս որ կայ նիւթական աշ-
խարհին մէջ՝ կայ նաև մարդոց աշխարհին մէջ.
ան է որ միտութիւն մը կուտայ պատմութեան ու

կեանքին, ան է որ հնարաւոր կընէ մարդկային
կեանքի գիտութիւն մը, այն կեանքին այլ և այլ
բնեւեղութներուն մէջ. համառօտիւ Մաթիւ Ար-
նոլտի բանաձեւը փոխ առնելով՝ «Կայ Զօրութիւն
մը մեզմէ դուրս՝ որ կը կենայ արդարութեան
կողմը»։ Այդ արդարութիւնն իրականութիւն մըն
է, և թէ մարդիկ՝ երբոր կը դիմեն Անոր մա-
քառելով, կը մաքառին ոչ թէ չեղած բան մը
ստեղծելու, այլ գտնելու ու ճանչնալու. ինչ որ
արդէն զոյտութիւն ունի: Այսօրուան օրս գրեթէ
ամէն մարդու ընդունած բանն է թէ մէկ հատիկ
ճշմարիտ կրօնքն է սովորիլ, սիրել և ակնածու-
թեամբ հնազանդիլ բնութեան օրէնքներուն. և
ասիկա ընդունիլ է թէ արդարութիւն կայ Տիե-
զերքին մէջ: Կայ ուրեմն բան մը բնութեան մէջ
որ արժանի է սիրոյ ու հնազանդութեան, և ա-
սոր հաւատալը՝ հաւատալ է Աստուծոյ գոյութեան:
Ամէնէն ուղղափառ Աստուածաբանն ալ միայն մէկ
բառ մը պիտի փոխէ այս դաւանանքին մէջ որ
գրեթէ ամէնունը եղած է հիմակ. ան պիտի ը-
սէ. «Մէկ հատիկ ճշմարիտ կրօնն է սովորիլ, սի-
րել և ակնածութեամբ հնազանդիլ Աստուծոյ օ-
րէնքներուն»։ Ինչ որ միւսները բնութիւն կը
կոչեն, ինք Աստուած պիտի կոչէ: Բաւական է որ
երկու կողմէն ալ ճանչցուի թէ տիեզերքին մէջ
կայ առարկայ մը արժանի սիրոյ և ակնածական
հնազանդութեան. բոլորովին երկրորդական կա-
րեորութիւն ունեցող մըն է այն անունը զոր ի-
րենք կուտան այս առարկային:

Հիմա ուստի գիտական աշխարհին մէջ գրեթէ
ամէն մարդ կ'ընդունի Հէրպերթ Սթենսըրի յայ-
տարարած Զօրութիւնը. որ է Անհուն և Յաւի-
տենական ինչպէս կընէ մեր ժամանակի այդ ա-
մէնէն ականաւոր փրկիստփան, նաև ինչպէս որ կը

հաստատեց սոյն փիլիսոփան, այդ Զօրութիւնը միակ է, մէկ Աստուած մը կայ, այդ զօրութիւնը իմացական է, կըսէ բոլոր գիտութիւնը, որովհետեւ խորհուրդ կայ Տիեզերքին մէջ, և եթէ խորհուրդ չկենար, գիտութիւնը երբէք գոյութիւն չէր կրնար ունենալ. այդ Զօրութիւնը արդար ալ է, ապա թէ ոչ՝ մարդկային կեանքի պատմութիւնը գոյութիւն պիտի չունենար, ապա թէ ոչ՝ սիրել և հնազանդել զօրութիւն պիտի չունենային: Ահա այս կտրուկով է որ գիտական աշխարհէն ալ կը ջնջուի անաստուածութիւնը: Անոր տեղ կ'աճցնի հիմա չգիտականութիւնը, և թէպէտ այս երկուքը շատ անգամ իրարու հետ կը շփոթին, բայց այս երկուքը ոչ թէ միայն իրարմէ զատ են, այլ զիրար ալ փոխադարձաբար կը կործանեն: Անաստուածութիւնը կըսէ թէ Աստուած չկայ, տիեզերք չկայ, այլ եղածն է շատ մը ալլասեռ և իրարու հետ յարաբերութիւն չունեցող բներեւոյթներ: Բարոյապէս ասիկա ինքնահաւանութեան փիլիսոփայութիւնն է: Անաստուածը պարզապէս կըսէ. «Ես, մարդ», Տիեզերքին ամէնէն մեծ էակն եմ. ինչմէ մեծը չկայ:» Ինչ աներեւակայելի խիղիւսութիւն և անձնապատանութիւն. մարդ ըսել կարող ըլլալու համար թէ Աստուած չկայ, պէտք է որ ճանապարհորդած ըլլայ սա մեզ շրջապատող անհուն տիեզերքը. և անոր ամբողջ շրջանը՝ կատարած ըլլալով փնտռած ըլլալ յաւիտենականութեան բոլոր ծածուկ խորշերը, անհունութեան դաշտերէն անցած դարձած ըլլալու է, ամէն տեսակ ուղղութեամբ սաւառնած ըլլալու է մինչեւ վերջին արուարձանները այն անշրպեւորին, որ ինքնին անվերջանալի է, և յետոյ մեր այս պզտիկ աշխարհին բերած ըլլալու է տիեզերական դատարկութեան լուրը, թէ հանդիպած չէ տեղ մը բոլոր անհունութեան մէջ՝ նախադէպ Աստուծոյ մը և ոչ մէկ շարժումին: Մարդ, ուրանալու համար զԱստուած, ինք պէտք է ըլլայ Աստուած, ինք պէտք է ունեցած ըլլայ Աստուածութեան ամենուրեքութիւնը և ամենապիտոութիւնը: Այս է այն ծայրագոյն անտեղութիւնը որուն կը հասնի անաստուածը, և ասոր համար է որ ալ գրեթէ գոյութիւն չկրնար ունենալ արդի գիտական աշխարհին մէջ: Զգիտականութիւնը անոր հակառակն է: Մինչդեռ անաստուածութիւնը մարդը Աստուծոյ չափ կը մեծցնէ, չգիտականութիւնն ալ մարդը յետին աստիճան կը պզտիկցնէ, և կըսէ թէ մարդ չկրնար երբէք հասկնալ զԱստուած: անոր անձնականութիւն տալու աստիճան ալ չի կրնար գիտնալ զայն: Աս ալ պակասաւոր փիլիսոփայութիւն մըն է, քանզի հաշիւի մէջ չառնել երբէք մարդուն հոգեկան բնութիւնը իբր ազբուր և միջոց գիտութեան. բայց անաստուա-

ծութիւն չէ անիկա. ընդհակառակը՝ արդար հակադրեցութիւն մըն է անաստուածութեան այն յստորտ ինքնահաւանութեան դէմ որ կը վտարէ զԱստուած տիեզերքէն: Ուստի Զգիտականութիւնըն ալ, որ մարդը կը տանի ծայրագոյն մեծութեան ծայրագոյն փոքրկութեան, իր կարգին ինքն ալ պիտի անհետանայ՝ իր պակասաւորութեան պատճառաւ: Ինչ որ կուզենք մեր ընթերցողաց մտքին վրայ տպաւորել այսօր, սա է թէ գիտական աշխարհի մէջ այժմ խելքի դէմ բան մըն է այն դադափարը թէ տիեզերքը գիպուածով իրարու պատահող հիւլէներու կուտակում մըն է: Անշուշտ աշխարհիս մէջ կան անստուածներ, ճիշդ ինչպէս որ կան բազմաստուածեաներ և կռապաշտներ ալ, բայց գիտականապէս դաստիարակեալ շրջաններու մէջ հիմա անոնցմէ և ոչ մէկը կրնայ գտնուիլ: Կրօնն ալ պէտք չունի ապացուցանելու Անհուն և Յաւիտենական Զօրութեան մը գոյութիւնը ուրկէ կը բղխի տմէն ինչ: Գիտութիւնը հաստատած է Անոր գոյութիւնը, Պատմութեան երկաթ գրիչը արձանագրած է այն ձայնը որ մարդկային օրտին խորերէն ալ բարձրացած է ամենահին դարերէն սկսեալ, Այդ ձայնն է զոր հիմա ալ մեր ականջներուն որոտումներու պէս կը գողացնէ նաեւ գիտութիւնը:

(Բիւրակն)

Յ. Հ. ՃԷՃԻՉԵԱՆ

ԱՉԳԱՅԻՔ

Շահի պալատական բժիշկ Տօքթ. Յարութիւն Թիրեաքեան Խան որ այս միջոցին ընտանեօք Յուրիս կը գտնուի, ի նպաստ որբերու 500 ֆր. շրկեր է Պատրիարքարան:

—Այս տարուան Արմաշի ուխտաւորներուն թիւը 7000ի հասած է. իսկ վանքին ընդհանուր հասոյթը 700 ոսկի եղած է: Ուխտաւորաց մէջ օտարազգիներ ալ կան. եղեր. 25րէնզ մը երկու եղներ նուէր տարեր է՝ որոնք 40 ոսկիի արժուութիւն ունին եղեր: Այդ եղները Զարխափանի առջև տարուելով, միայն ականջներէն քիչ մը կտրուել են և անոնց փոխարէն երկու աքաղաղ մորթեր են, և եղները որոշուել է վանքին ագարակին մէջ պահել:

—Պաֆրայի և Զիլէի ազգ. վարժարանաց վերաշինութեան վերաբերեալ ֆէրմանները յանձնուել են Պատրիարքարանի:

— Կալացի մէջ քահանայական խնդիր ծագած և տեղւոյն Հոգաբարձութեան ու ազգայնոց միջև անհամաձայնութիւն առաջ եկած ըլլալով Ս. Պատրիարքը երկու կողմերուն ալ առանձինն յորդորական նամակներ ղրկեր է:

— Ախալքալաքի բերքերու նուազութենէն բաւական դիւղայիներ քննաւորած ըլլալով, աեղւոյն Ս. Փրկիչ եկեղեցւոյ քահանաներուն որոշմամբը եկեղեցւոյ սնտուկէն 1200 ռուպլի բաշխուեր է կարօտեալներուն:

— Ամերիկայի Առաջնորդ Գեր. Յովսէփ Սըրբազանի նախագահութեամբ Նիւ Եորքի Հայ եկեղեցւոյն մէջ հանդուցեալ նախագահ Մաքքրինլիի համար հոգեհանձնտեան պաշտօն կատարուեր և դերեզմանին վրայ Հայ գաղթականութեան կողմէ ծաղկեպտակ մը դրուեր է: Փրովիտէնսի եկեղեցւոյն մէջ ալ Արթ. Տ. Արոէն Վ. Վեհունի հոգեհանդստեան պաշտօն կատարեր ու դամբանական խօսեր է:

— Բազմապէս խմբագրութիւնը կը խնդրէ իր գործակալներէն որ փութան «Որբունի» թերթէն քննադատ հաշիւը գոցելու, և եթէ տակաւին իրենց մօտ կը մնան չվաճառուած թերթեր, ետ դարձնելու, որովհետեւ նոյն թերթը խմբագրութենէն խնդրուներ շատ կան եղեր:

— Տեղւոյս ազգ. վարժարանի կարող աշակերտք՝ իրենց աղքատ ընկերակիցներուն դրպրոցական պիտոյքը հայթայթելու գովելի նպատակաւ Սիսակեան Սանուց անունով ընկերութիւն մը կազմած են: Յարատեւութիւն կը մտալթենք:

ԹԱՏՐՈՆԻՆ ԶՈՒՐՁԸ

Կորսուած ապարանչանք

«Անցեալ կիրակի գիշեր Սանդրալի թատերատրահին մէջ հետեւեալը տեղի ունեցաւ:

Տոմսակալաճառին շատած սեղանին առջև ինկած էր թատրոնի հանդիսականներէն Պալկար տիկնոջ մը սկի ապարանջանը, և տիկինը չէր լմացած: Երբ Պ. Պէնլեան նոյն գիշերուած խաղին մէջ «Լրագրալաճառ»ի դերը կը կատարէր, հետեւեալ յայտարարութիւնը ուղղեց հանդիսականաց.

«Սաթմագտա օլտուղում: Կաղէթալարըն պիր տոլրու հալաւտիսին ալէնէն օգումայը մինասիպ

կէօրաիւմ. տիննէյինիդ. (Իբր թէ կարդալով) Պու ագչամ Սանդրալ թէաթրօսունա թէշրիֆ պուլուրան թէաթրօթէրմէրան մատամլարտան պիրի՝ ալթուն պիլէզիյինի տիւշիւրմիւշ օլտուղունտան, ոահիպի՝ լութֆէն Վէսէլօ գումբանեաւնա միւրաճաւթիւ պիլէզիյինի ալսըն»:

Ի լուր այս յայտարարութեան ներկայ եղող երկսեռ հանդիսականք հետաքրքրուեցան, ու ապարանջանը կորսնցնող աիկնոջ ամուսինը սրահին մէջէն հրճուանօք դէպի թատերաբեմ խոյանալով ստացաւ ապարանջանը, շերմ շնորհակալութիւն յայտնելով Պ. Պէնլեանի, որ հանդիսականաց կողմէ ալ շեւումպէս ծափահարուեցաւ:

Թիւ 25 Աթոս

ՏԵՂԵԿՆԵՐ

Աժանս Բոճոճիկ եւ Ընկ.

Բարիդ

Պ. Չոպանեան ճուղիկնա մը նաւատորմիդ ապրսպրեց Պոլսոյ Էյուպի . . . օյիկնազնիներուն:

Անդէն

Մինչև ցարդ հոռ հասնող 21) հայ գերազանցներ անցեալ շաբթու Պ. Աղամեանի նախագահութեամբ ժողով գումարելով երբ խումբ չը կտգմելու վրայ էին մէկ քանի ներկայացուցիչներ տալու համար, ահա յանկարծ Պ. Ֆասուլեանձեան վրայ հասնելով խումբը ցըրուեց: Տայը Միրիկ, որ անկիւն մը կծկտած էր, ֆասուլեանձեանը անսեղուն պէս անոր վրայ ցատկեց եւ ըսկսաւ նամուսուճու իսթէրիմ պողալ:

Պ. Էքշեանի առաջարկութեամբ քննիչ յանձնաժողով մը կարգուեցաւ: Մանրամասնութիւնք յաջորդով

Աղբսանդրիա

Հոյակապ ապուշը որ «Հայիլիդի խարաղանէն սահմակելով, «հերկէն դարձող յոգնած եղի մը! տարտամ կերպարանքն առած էր. (Ե. Օ.)» հոս տարաձայներ էր որ «Հայիլիդն այլևս դադրած է, բայց երբ հրատարակուած տեսաւ, բերանը դիդ մը բաց մնաց, ուր անարգել կը մանեն կելին քաճաթթա յի ճանձերը:

Անդէն

Որոշուոյաւ գրիւ ի Վարնա Տիար Տ. Գալէմձեանի, որ հոս կազմուելիք Անգենական խումբին համար վարժ յուշարար մը դրկէ:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թույլունները ներկել

Թույլունց փետուրները ներկելու համար արուեստագետ մը անոնց ուտելիքին կը խառնէ եղեր կարիպալտի գոյներ։ Այս կերպով յաջողեց է հասցնել կարմիր ու կապոյտ աղանիւններ և ծիրանի գոտիի բոլոր գոյները՝ ունեցող դեղձանիկներ։

Մակոյկներու մեքենայ

Վերջերս Ամերիկայի մէջ նաւակ ու մակոյկներու համար ելեկտրական նոր մեքենայ մը հրահարուեց է։ Այս մեքենան՝ մակոյկը ծովուն վերայ քալեցնելէ զատ, ղեկին պաշտօնն ալ կը կատարէ։ Անիւր, մեքենան ու ղէկը որոնց աւելնը 45 ոսկիի ապրանք կըլլայ, մէկ մարդու միջոցաւ կարելի է եղեր դիւրութեամբ ամեն տեղ փոխադրել։ Սոյն մեքենան մակոյկին ետեւի կողմի նստարանին տակը ղետեղելով, ժամուան մը մէջ 4էն մինչև 30 փարսախ տեղ կը յառաջանայ եղեր։

Նոր Զրահ մը

Իտալացի էրնէսթօ անուն արուեստագետի մը կողմէ զինուորներուն հագցունելու համար հնարուած է նոր զրահ մը ոսկից չեն կրնար թափանցել մինչև իսկ վեց ոտք հեռաւորութենէ արձակուած վեցհարուածեանի և կամ հրացանի մը գնտակները։

Սոյն զրահին գինն ալ բաւական գոհացուցիչ ըլլալուն, Իտալիոյ պատերազմական նախարարութիւնը որոշեց է բանակին մէջ գործածել զայն։

Էսիսքն եւ Լրագրութիւնը

Ելեկտրական մեքենային հնարիչ էտիսքնի կարծիքին նայելով, լրագրի ընթերցումը յառաջիկային ֆոնօկրաֆին պիտի յանձնուի։ Բոլոր լուրերը ու ազդարարութիւնները փոխանակ տառերով շարուելու, ֆոնօկրաֆի քլսններուն (գովան) մէջ պիտի լեցունին ու լրագրի տեղ քլանները ծախուելով, լուրերը ֆոնօկրաֆէն պիտի իմացունին։ Տիեզերահռչակ հնարիչը կըսէ թէ, ըստ ըժշկաց վկայութեան, մարդուս աչքերը աստիճանաբար տկարանալով չպիտի կրնան ամեն օր

այն բարակ ու պշտիկ գիրերով տպուած թերթերը կարդալ։ Հետեւաբար, լրագրաց ընթերցումը վերջապէս օր մը ֆոնօկրաֆին պիտի յանձնուի։

թարգմ.

ԱՍՏՂ

ԶԱՆԱԶԱՆՔ

Ինչպէս կը նշանուելու Սիստի մէջ

Սիստի մէջ նշանուելու սովորութիւնները շատ տարօրինակ են։ Հոն երբ երիտասարդ մը նշանուիլ ուզէ, կամ ծաղիկ մը կուտայ աղջկան և կամ իր սիկառը անոր սիկառէն կը վառէ, ինչ որ իր նշանուիլը կը ցուցնէ եղեր։ Եթէ երիտասարդ մը աղջկան մը շրթունքներուն մէջէն սիկառը առնէ, ատիկա կը ցուցնէ թէ անոր սիրովը կ'այրի կը տոչորի։ Եթէ աղջկն ալ նոյն սէրը տածէ տղուն նկատմամբ, անմիջապէս կը սկսուին ամուսնութեան պատրաստութիւնները, որոնք շատ բազմաժառի են։ Եթեւ կողմն ալ առ նուազն 200ական ոսկի պէտք է ծախսեն։

Հնգկաստանի մէկ քանի կողմերն ալ ամուսնութեան հրաւիրել կը նշանակէ աղջկան մը ձեռքէն իր սիկառը կամ երկայն ծխափողը վառելը։ Սիստիոյ մէջ ամուսնութեան հրաւիրուող աղջիկ մը իր հաւանութիւնը յայտնելու համար տուփ մը սիկառ և զոյգ մը հողաթափ կը նուիրէ եղեր։ Այս վերջին նուէրը ցուցնելու համար է թէ երիտասարդը ալեւ իր տանը տէրը և հրամայողն է։

Պարկեշտ դասարկապոս մը

Իրիկուն մը աղտոտ ու թափթփած հագուստներով մարդ մը կը ներկայանայ Բարիկ Սորպոնի թաղին ոստիկանութեան գրասենեակը և կը յանձնէ ոսկիէ փառաւոր ժամացոյց մը՝ իր շըլ-թալովը միասին։ Բանի մը վայրկեան առաջ Պուլ-վար Սէն փէրմէնի մէջ դտեր է եղեր զայն, 30 թիւ շէնքին առջև։

Ոստիկանական պաշտօնեան սաստիկ զարմանալով գտնուած իրեղէններու արժէքին և զանոնք այնքան պարկեշտութեամբ ուստիկանութեան յանձնող մարդուն կերպարանքին մըջև եղած մեծ հակասութեան վրայ, ջերմադին կը շնորհաւորէ զայն ու կըսէ։

— Հաղթէ՛իդ տուէք, խնդրեմ, որպէս զի երբ ժամացոյցին տէրը գտնուի, կարենայ զձեզ վարձատրել։

— Բնակարան չունիմ:

— Ինչպէ՞ս. բայց չէ՞ք դիտեր թէ օրէնքը կը դատապարտէ զձեզ:

— Շատ լաւ գիտեմ ատիկա, բայց ո՛չ գործ ունիմ, ոչ բնակարան, և ոչ ալ եկամուտ: Երկար ատեն ցաւեցայ չար բաղդիս դէմ, բայց հիմա ալ չեմ կրնար. 45 տարեկան եմ, ու այլեւս պէտք եղածին չափ չօրաւոր չեմ: Բանա գրէք զիս, գոնէ ուտելիք մը կունենամ հոն:

Ոստիկանութեան պաշտօնեան փոխանակ բանտ ղրկելու այդ ընդիմացի ժողովէն առնուանքը, հաց և բնակարան հայթայթեց անոր, և ջանաց նորէն արթնցնել իր մէջ կորովն ու քաջասրտութիւնը:

Զուարճաստի Կողմը

Վերջերս գողութիւն մը տեղի ունեցեր է Պէրլինի մէջ բնաւ մտքէ չանցնելիք պարագաներէրու մէջ: Լաւ հագուած, պարկեշտ կերպարանքով երիտասարդ մը օշարակավաճառի մը գիմելով երկայն գլխարկ մը կուտայ և լրջօրէն կըսէ որ լեմոնի օշարակով լեցնէ զայն:

— Կատակ կընէք, պարոն, կը պատասխանէ օշարակավաճառը քաղաքավարութեամբ:

— Ինչո՞ւ կատակ պիտի ընեմ, յանձնարարութիւն մը կատարելու եկայ: Շուտով լեցուցէք և տուէք:

Օշարակավաճառը կը ստիպուի համակերպիլ յաճախորդին, որ ձեռքը գրպանը տանելով կըսէ.

— Ի՞նչ պիտի վճարեմ:

— Մէկ մարք 60 ֆէննիկ:

— Շատ աղէկ. ահաւասիկ թալէր մը. վրան տուէք:

Օշարակավաճառը հաշուեօգնականին առջև կերթայ մնացած դրամը ետ տալու համար, և երբ կը ծռի դարակը բանալու, յանկարծ գլուխը անցուած կը տեսնէ այն գլխարկը, զոր ինք լեցուցած էր... օշարակով: Գլխարկը շատ խոշոր ըլլալով մինչև օշարակավաճառին ուսերը կը ծածկէ, օշարակն ալ վրայէն վազելով:

Օշարակավաճառին աչկերտը որ տեղ մը զըրկուած էր, դառնալով կը տեսնէ իր վարպետին ոչորման լի վիճակը, բայց մարդուն դրամները մէջտեղ չկային... Պարկեշտ յաճախորդը կծիկը դրած էր, և թերեւս մինչև հիմա կը փախչի:

Հետեւեալ գրքերը կը ծախուին Ա. Զարպհանէլեան գրատունը.

Հին ուխտի	1 ֆ. 10 "
Նւր ուխտի	" "
Ընթացք շարադ. և վայելչութ.	" "
Մայրենի լեզու Ա. տարի	70 "
" " Բ. "	1. 20

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ԱՂԶԻԿԸ

(ՖԱՆԹԵԶԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ)

Նուէր Սօժիին, Ֆիլոսոֆիա ու Եւրիսթիկն:

Լանջքով հարուստ, միտքով՝ դարտակը: Սէրով երբեմն սառ, իր Սեռով յա՛ր տաքը:

Միայն անուրջ կայ խելապատակը, և և քուրջ՝ իր... սնտուկին յատակը:

Բերանին մէջ լեցունի՝ «այո՛, ո՛չ» երու կեղծ գումարտակը, ու մեղանին մէջ (սիրականին գըրած ատեն)՝ ոճերու է՛ն ճամարտակը:

Որպէ՛ս զի վարվուուն կարծուի, կը կամթտէ ականջներուն բլթակը և պրկունքին թուլ տակը:

Օտարին ըրածն ընել, ինչպէս քաջ թուլթակը, դաշնակէն զատ զարնել կ'ուզէ ջուլթակը. տարին կանցնի, դեռ չի կրնար պրկել անոր բուլթակը. Խօսիլ խնդալ, երգել կարգել, իր ձեռքն է միշտ պտուտակը:

Ի՛նչ ոտոր բան՝ խծուել քաղաւած բէշին համտակը, կամ չփել տունին տախտակը: Պաշաած անձին հետ կաղմել ջուլտակը, ահա՛ իր բուննը պատակը. ծնողքին հանդէպ ապրելով ու մեր ճանչցած հեղ հպատակը, որ գիտէր խաղալ պատուհանին մնջկատակը:

Զուարթ՝ ինչպէս լեռնի վեր վաղող նապաստակը, կը ցատկէ չուան՝ դուռը բաց տան մարմար անդաստակը: Անցնող դարձող կը դիտէ եղեր իր որունքն ու դաստակը, ինչո՞ւ ամօթ, գրաւելու ունի ամբողջ ազգակը:

Իրն է հօրը վաստակը, ուստի և... Դամասկոսի պիստակը:

Մայրը կեփէ իրեն խարխնծիով կարկանդակը, ու... մեղրադուռի բանդակը:


Հարսնիքներու, երեկոյթի՝ վրան ունի գոհարն ու սուտակը, բայց մի՛ իյնար մէջ՝ փնտռելու «ատոնք ո՛ւրկէ ձեռք ձգեցո՞ւն զս'ւտ սկը»:

Բաւական է չիք ըլլալ. էրիկ կընտրէ մանչերուն է՛ն իմաստակը. առաջ հոգին կը յանձնէ անոր, ու հիմա ստակը:

Օրին մէկն ալ հոգին կը զգայ սիրոյ շէնքին փլատակը. ցառով կըսենք իր ետեէն. — «Խեղճ նահատակը», ներսերնիս պահած իր յիշատակը:

Ուստի ամեն բան մաղթենք իրեն, բայց ո՛չ բախտին ապտակը:

ԹԷՎՕ



Թատրոնին մէջ.

— Ներողութիւն տիկին, գլխարկնիդ արգելք կը լլայ ինձ թատերաբեմը տեսնելու, մինչդեռ հինգ ֆրանք վճարած եմ.

— Ես ալ, պարոն, իմ գլխարկիս համար ձեզ մէջ տան անգամ տուելի վճարած եմ ամենուն տեսնել տալու համար:

Հիւանդ մը իր բժիշկին հետեւալ ասորը գրած էր.

«Ձեր տուած դեղէն օգուտ մը չտեսայ, խնդրեմ ուրիշ մը տայիք».

Բժիշկը ասոր վրայ ուրիշ աւելի ազդու դեղագիր մը գրելով կը զրկէ ուղղակի դեղագործին, որ խնամով կը պատրաստէ յանձնարարուած հապերը ու տուիք կուտայ իր ծառային որ հիւանդին տանի դեղագործին հետ մէկտեղ: Միևնոյն ժամանակ կը յանձնէ ծառային վանդակ մը որ կը պարունակէր 6 հատ գեղեցիկ նապաստակներ, ու կըսէ անոր.

— Ասոնք ալ մէր տունը ձգէ.

Ծառան շփոթելով, նապաստակները ու դեղագիրը հիւանդին տունը կը ձգէ, ու հապերուն տուին ալ իր տիրոջը տունը:

Հիւանդը կը սարսափի ընդունելով նապաստակները և դեղագիրը, որ հիւանդին կը յանձնարարէր գործածել սապէս.

«Ամէն կէս ժամը անգամ մը 2 հատ կ'ընել»:

Յայտնի է որ կղերականութիւնը մեծ ազդեցութիւն ունեցած է Սպանիոյ մէջ, ուր ծագում առած է Հաւատաքննութիւնը: Թէպէտև այժմ կղերական դասը մասամբ կորսնցուցած է իր ազդեցութիւնը, բայց նորէն հասարակ ժողովուրդը անոր փին մէջն է: Ասիկա հարտատելու համար վերջերս լրագրի մը մէջ հետեւեալը կարդացուած է.

Անտալուզիացի (Սպանիա) գեղեցիկ կին մը

սիրահարած, էր՝ այնպիսի անձի մը որ ըստ իւր գաղափարին մեղք ըլլալ կը համարէր: Օր մը խիղճը ալիւս չգիտնալով եկեղեցի կերթայ ու կը ծնրադրէ իր խոստովանահօր առջև:

Խոստովանահայրը նախնական աղօթքները ընելէ վերջը կը հարցնէ գեղանի կնոջ.

— Տիկին, ի՞նչ մեղքեր գործած էք.

— Սուրբ խոստովանահայր, անգամ մը սուտ խօսեցայ ոչինչ բանի մը համար.

— Մի՛ կրկնէք զայն ուրիշ անգամ. Աստուած թողութիւն չնորհեացէ.

— Անգամ մը դրացիս յանդիմանեցի.

— Աստուած թողութիւն չնորհեացէ.

— Ապտակ մը զարկի սնառակ տղու մը.

— Աստուած թողութիւն չնորհեացէ.

— Բան մըն ալ կայ, բայց չեմ համարձակիր ըսելու.

— Ըսէ՛ք, մի՛ վարանիք.

— (Յաժ ձայնով) Կը սիրեմ.

— (Աչքերը բանալով) Ի՞նչ ըսիք.

— Այո՛, սաստիկ կը սիրեմ.

— (Բարկութեամբ) Սոսկալի մեղք.

— Հիանալի կերպով կը սիրեմ.

— (Զայրանալով) Դժոխային մեղք.

— Անմոռանալի կերպով կը սիրեմ.

— (Ձեռքերը վեր բարձրացնելով) Մահացու մեղք: Բայց ով է այդ անձը զոր այնչափ կը սիրէք.

— (Կարմրելով) Դու՛ք էք, սուրբ խոստովանահայր:

— (Ժպտաղէմ օրհնելով) Աստուած թողութիւն չնորհեացէ:

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻԿՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ ֆորալար վէ Հիքեայէլէր. Մալիմաթը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի էյլէնճէլէր վէ Բէսիմի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ նէշր օլունան մէղքիւր քիթապըն պիլինճի ճիլտի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլտէ սաթըլմագաա տըր. Ֆիյ 2 ֆրանք.

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (32)

ՈՒՆԷ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՂԱՐՄԻՐ-ՄԱՄՈՆԻԳ)



Առջի օրերն էի վեր օդը գէշ էր և ծովահէնները ցամաք բաշելու վրայ էին իրենց մակոյկները, զորս շրթադերձ ծովը կը սպառնար խորտակել ժայռերուն վրայ, երբ գետին վերեւէն նշմարեցին մակոյկ մը զոր հոսանքն ու բամին բացը կը բշէին կը տանէին:

Մարդ մը, հսկայական հասակով, կը գտնուէր այդ մակոյկին մէջ, որ երբեմն անհետ կըլլար կոհակներուն առկա:

Յետանկողմը կեցած, մէկ ձեռքով ղեկը վարելով և միւսովը առագաստին չուանը որուն մէջ կը լեցուէր հովը, փորձ նաւաստիի պէս կը կառավարէր ինքզինքը՝ զերծ մնալու համար խրուանդէն և ծովուն բախումներէն, սակայն ոչ միայն ուրականին դէմ էր կռուիր, այլ ընդհակառակն կարծես ընդ առաջ կը վազէր մահուան:

Այն պահուն երբ պիտի դառնար Անկ-Մուի հըր-ուանդանէն, նշմարեց ծովեզերը կեցողները, և, իբր թէ այս բան մէկէն ի մէկ փոխէր իր որոշումը, թուլցուց առագաստը զոր հովն առաւ տարաւ. յետոյ թեւակի հարուածով մը փոխելով իր ուղղութիւնը, խարակներուն մէկ նետուեցաւ, ուր իր մակոյկը խրեցաւ խորտակուած:

Բայց ինք ողջ առողջ էր. Գազանի ոստումով մը գետին ցատկած էր. Ծովահէնները վրան վազեցին. Թողուց որ իր վրայ գան, առանց դէմքին մէկ գնդերը շարժելու:

— Ո՛ր եմ, հարցուց՝ ձայնը լսելուն պէս.

— Դուն ո՞վ ես, ըսաւ աւազակներէն մեկը.

— Մարդ մը զոր փոթորիկը կը տանէր եւ որ կուզէր մեռնիլ:

— Անանկ տեղ մըն ես, ուսկից ոչ մէկ օտարական դուրս ելած է ողջ ողջ. Զուրի-Եղեգի հողին վրայ ես. Ես Բէյ-Հոն եմ, ան որ կը հրամայէ հոս:

Փոխանակ գողալու այս յայտնութենէն, ինչպէս կը սպասէր անշուշտ իր խօսակիցը, նաւաբեկեալը անհետ չեթեթ ժպիտ մը ունեցաւ և ցցելով իր բարձր հասաւիլը, պատասխանեց.

— Ուրեմն աղէկ, բախտն է որ հոս կը բերէ զիս: Կ'ուզես որ ձերիններէն ըլլամ:

— Դո՛ւն. անունդ ի՞նչ է.

— Կարմիր-Մամուկ կը կոչուիմ:

— Կարմիր-Մամուկ:

— Այո՛:

— Ո՞վ պիտի ապացուցանէ թէ մեզ մասնելու չես դարձ: Ո՞վ պիտի ապացուցանէ թէ բաջասիրտ ես ու կարհամարեա այն կեանքը որով ամենքս ալ վառուած ենք:

— Մարդ մը ձեռքէս առաւ սիրած կինս, իր հարսնիքին գիշերը իսկ մեռուցի այդ մարդը. իր սենեակը սըպրդեցայ և հարսնացուն տուած գոհարները գողցայ: Ահա ըրածս. Վայրկեան մը առաջ փոթորիկը կը տանէր զիս դէպի անսահմանութիւն, և ես չէի կռուեր անոր անոր դէմ. ինքզինքս մահուան ձեռքը կը ձգէի. Աւասիկ ով ըլլալու. Կը հաւատաս որ կարեւորութիւն տամ կեանքին:

Անծանօթն այս խօսքերն արտասանած էր անանկ վայրագ կարծով մը որ Զուրի-Եղեգին անգամները չէին կրցած սքանչացման շարժում մը զսպել:

— Արդէն, շարայարեց, ձեռքերս պարապ եմ դար. Աւասիկ փրկագինս:

Եւ մէջքէն կախուած լայն պարկի մը մէջ խոթելով ձեռքը լիաբուռն խոկի ու գոհար նետեց ծովահէններու պետին առջև:

Այս վայրագ տեսարանին ներկայ գտնուողները մոլեգին կեցցէներ արձկեցին:

— Լաւ, պատասխանեց Բէյ-Հոն ձեռքը շուին կարկառելով, և նշան ընելով իր մարդոց որ մէջերնին բաժնեն փոթորկին ղրկած անակնկալ այդ աւարը. լաւ. այսօրուրէ սկսեալ մերիններէն ես:

Ութ օր ետքը, ֆուն-Սիի նախորդ մասվաճառը կը մասնակցէր առաջին արշաւանքի մը. Անկ-Մու հասնելէն հազիւ ամիս մը ետքը, արդէն իր ճարպիկութեամբը կ'իշխէր ընկերներուն վրայ:

Ինչպէս ծովեզրի աղբատ բնակչաց մեծ մասը, Չուալ կեանքն սկսած էր ձկնորսութեամբ, և ոչ ոք իրմէ աւելի աղէկ գիտէր Սի-Քիանկի հազարումէկ դարձուածները, վտանգներն ու ապաստանարանները:

Առանց բան մը խնդրելու ընկերակցութենէն, Հոնկ-Քոնկի մէջ անշիւական մակոյկներուն նման բսան թիակով երկար մակոյկ մը շինել տուած էր, որուն արագութիւնը կը գերազանցէր բոլոր մանտարէններուն նաւերը և իր շուրջը համախմբած էր կուրորէն անձնուէր երեւոյնի չափ նաւազներ:

Վարդ իր աւելանդումէն յետոյ այս մակոյկով փոխադրուած էր .

Բայց Բէյ-Զօ զայրոյթով տեսած էր այս նորիկին զօրութեան բարձրանալն իր իշխանութեան բով , և կը մտադրէր աղափիլ իր հակառակորդին ձեռքէն , երբ ձերբակալուած էր անգլիական երկու երկկայմերուն աւարտումէն ետք , որուն վրէժը պիտի լուծէին Հոնկ-Քոնկի կախաղանները :

Իսկ աւագակները բնաւ չէին հարցափորձել զայն . վասն զի իր ամեն մէկ դարձէն ետք յաջողութեամբ պը սակուած արշաւանք մը տեղի կունենար : Ջուրի-Եղեզը երբէք աւելի բարեբաւտ եղած չէր .

Միկնող կամ ժամանող նաւերն անանկ ճշգրութեամբ կը ծանուցուէին և ծովեզերեայ տեղերու աւարառութիւնը անանկ արագութեամբ կը կատարուէր որ Կարմիր Մամուկը իր ծուղակը լարեց նահանգին բոլոր այն մասին վրայ զոր կը թըշէր Սի-Քիանկ .

Ֆուեն-Սիէն հեռանալէ ետքը պահուեալ էր քանդոնի մէկ արուարձանին մէջ և հոն իր ատելութեան ու վրիժառութեան յուսովն համակ , հնազանդած էր բիրտ բնագոյներուն որոնցմով շաղուած էր իր գարշելի բնաւորութիւնը :

Խաղարաններու և թէյատուներու յաճախող մըն էր եղած , վայրի վայելք մը գտնելով խաղի մէջ վրտանգելէ և հաճոյքներու մէջ մտնելէ այն զրամը զոր աշխատութեամբ դիպած էր եւ զոր չէր կրցած վատնել ընծաներ գնելու համար .

Բախտը նախ անյաջող գացած էր եւ պարտաւորուած էր ծախսել հարսանեկան սենեկէն գողցած գոհարներուն մէկ մասը , ոստիկանութեան ուշադրութենէն զերծ մնալու համար , բայց յետոյ բախտը փայտած էր իրեն .

Այսպէս , իր արիւնտ ծրագիրները պատրաստելով , հասաւ իրու-Սիուի ամուսնութեան օրին , և անշուշտ մոռցուած չէ թէ ինչպէս ի գործ դրաւ իր գարշելի խորհուրդը :

Բայց , իր չարիքը գործագրելէն յետոյ , մարգասպանին առաջին հոգն էր եղած խոյս տալ ,

Այն գիշերն էր ուր առանց փոթ ընելու ուժգին հովը , գետեզրը խարսխուած առաջին մակոյկը ձեռքանցուցած էր .

Մոլեգնութենէ խելայեզ եւ ուր երթալիքը չգիտնալով , գետին հոսանքին ձգած էր ինքզինքը . եւ շատ չանցած փոթորիկը , որուն դէմ չէր կրնար մարտիլ , վանկ-Մուի ժայռերուն վրայ քշած էր զինքը :

Գիտենք թէ ինչ օգուտ բաղած էր այդ կացութե-

նէն : Սակայն՝ վտանգներու եւ արկածներու այդ կենցաղը բան մոռցունել չէր տուած իրեն .

Վրէժ լուծելը բաւական չէր հրէշին համար , ու զեց գիտնալ թէ իր փախուստին յաջորդ օրը ինչ տեղի ունեցած էր ամարանոցին մէջ , եւ երբ իմացաւ որ իր սարսափելի ոճիրը անյուսալի յաջողութիւն մըն էր ունեցած , այսինքն թէ Սի-Պրոտէ եւ Ի-Թէ ամբաստանուած էին Լէնկի սպանութեամբ , միտքը գրաւ հեռեւիլ զատաւարութեանց եւ հիմէ անոնք դատապարտուէին , ներկայ գտնուիլ անոնց չարչարանքին .

Այս պատճառաւ յաճախակի ուղեւորութիւններ կը նէր ի քանդոն , որոնցմէ օգուտ կը օգտէր Ջուրի-Եղեզին համար նպաստաւոր տեղեկութիւններ առնելու , եւ որոնք յարաբերութեան դրած էին զինքը մուրացկաններու իշխանին հետ .

Մինակ , որովհետեւ բնաւ ուրիշ էր պանդոկ չէր կրնար իջնալիլ , օրերն ու գիշերները կանցունէր ծովահէնի նաւերուն մէջ , ուր չէր վախնար ոստիկանութենէն որ արդէն չէր կասկածեր իր վրայ :

(Շար.)

ԱԶԳ

Հետեւեալ գիրքերը մեր խմբադրատան մէջ կը ծախուին .

Լուսինեան Իշխան — Ֆրանսահայ Բառարան , գին 25 ֆր . ոսկեդրամ . Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք .

Թ. Գ. Հինտլեան — Տեսական և գործնական Բերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր .

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Ի . ի և անոր Պապ որդւոյն . 2 ոսկէս ֆր .

Թապլաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ .

Բարեկենդանի անկուտիները , կատակախաղ 1 արար 50 սնդ .

Մահճուպիյէթին միւքեաֆաթը , գօմէտի պիր բէրտէ , 50 սնդ .

Գոգանճ դօճա եախօտ Էնֆիյէճի , գօմէտի պիր բէրտէ , 50 սնդ .